ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

- դեկտեմբերի 2024 թվականի №--Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի №170Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 17-ի և դեկտեմբերի 18-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 22-ի «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Որոտան-7» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №170Ա որոշմամբ «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0497 լիցենզիայի պայմաններում ամրագրել վերակառուցման ժամանակահատված՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը, և որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի՝

   1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

      «3. Սույն լիցենզիան գործում է մինչև 2028 թվականի մայիսի 22-ը, որից՝

      1) 2024 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը վերակառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև 2028 թվականի մայիսի 22-ը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:»,

2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում՝ լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածներում) վերակառուցել 2451 կՎտ հաշվարկային հզորությամբ «Որոտան-7» փոքր հիդրոէլեկտրակայանը (այսուհետ՝ Կայան), արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի դեկտեմբերի 26-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- դեկտեմբերի 2024թ.